# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5274-Ա « 24 » դեկտեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԵՎ «ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ, 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6.1 կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ և 84-րդ հոդվածներով.

1. Հաստատել Երևանի ենթակայության ««Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» և «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերությունների կառուցվածքները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը, 2026 թվականի եկամուտների և ծախսերի ու դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները՝ համաձայն N1-6 հավելվածների:

2. Հանձնարարել սույն որոշման 1-ին կետով նշված փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին «Պարգևատրում» հոդվածի գծով գումարները, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրամական միջոցների ազատ մնացորդն օգտագործել բացառապես աշխատակազմի առողջապահության և ֆինանսական վարչությունների հետ համաձայնեցնելուց հետո:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետի և սույն որոշման 1-ին կետում նշված փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների վրա:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Ս□ Մադաթյանի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ** 